

սրահը դրուած էր նաև՝ յառաջացեալ աշակերտի մը Պ. Մկրտիչ Զօպանեանին երկու իւզաներկ պատկերները, որոնց աղէկութեանը և ճշդութեանը վկայութիւններ տուին նոյն անձինքը, մանաւանդ վենետկոյ Գեղեցիկ արուեստից Ակադեմիային Տեսուչն և քաղբիս օրադիրը, յորոց առաջինը աշակերտէն աւելի վարժապետի արժանաւոր վրձնոյ արդիւնք կը համարէր:

Ահաւասիկ աւարտավարժ պատանեաց թիւը, որոնք ընթացքնին լմնցուցած դարձան 'ի Հայրենիս .

- | | |
|--------------------------------------|-------------------------------------|
| Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՍԻՐԵՄՅԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ | Պ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ ՏՐԱՊԷՋՈՆԵՑԻ |
| Պ. ՎՐԹԱՆԷՍ ԳՈՒՇՆԵՐԵԱՆ ԽԱՐԱՍՈՒՊԱԶԱՐՑԻ | Պ. ՅՈՎՀԱՆ. ԳՈՒՐՈՒՊԱԼԻՔԵԱՆ ԵՒԴՈԿԻԱՑԻ |
| Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՎԱՅԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ | Պ. ՄԻՍԱԲ ՄԱՍՐԱՅԵԱՆ ՍԱՄՈՌԵՑԻ |
| Պ. ՂԵՒՈՆԻ ՄԵԼԻՔԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ | Պ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ ԵՒԴՈԿԻԱՑԻ |
| Պ. ԳՐԻԳՈՐ ՍԵՆԱՊԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ | Պ. ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ ԵՒԴՈԿԻԱՑԻ |
| Պ. ՊՕՂՈՍ ԷՄԻՐՁԷՒՆԱՆ ՊՐՈՒՍՅՑԻ | Պ. ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ |
| Պ. ԿԱՐԱՊԵՏ ՍԵՂԻՍՏԵԱՆ ԱՐԻՒՆՈՒՊՕԼՍԵՑԻ | Պ. ՄԻՀՐԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ |
| Պ. ԱՆՏՈՆ ԳԸԼՅԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ | Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ |
| Պ. ՊԵՏՐՈՍ ԳԻՐԳՅԻՒՆԻՍԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ | Պ. ՎԱՐԴԱՆ ՄԻԹԱՐԵԱՆ ԿԱՐԵՑԻ |

Ի հաճութիւն ընթերցանելեաց կը դնենք հօս Պ. Միհրան Տամատեանի Պարզևաբախութեան առթով կարգացած ոտանաւորը իբրև հրածեշտ մը .

ՎԵՐՁԻՆ ԲԱՆՔ ՀՐԱՃԵՇՑԻ

ԱՌ ԳԵՐԱՊԱՅԵԱՌ ՏԵՐԴ ԵՒ ՅԱՐԳՈՅԱՊԱՅԻ ՀԱՐՍ

Զոր օրինակ հեղասահ ի յատափայտ ծովածուփ
Զամեհի ալիս նաւորդք անդընդահերձ փեռեկեալ,
Արշաւելով 'նդ անդորտ անեղրական դըրունս հողմոց
Եւ ընդ ժայռ և ընդ խութ կոծեալ բաղխեալ ընդ ալիս,
Տաղտուկ յերկար 'ի տարուբեր սահանակոծ ծրփանաց
Անձկարեկ անձկակարօտ առ ծովափունս ասպընջական
Առ խուն նըշմար ցամաք հողոյ 'ի բիւր մաղթանս հառաչեն,
Զոր թէ յանկարձ 'ի հեռուստ լիցի նոցուն նըշմարել
Հըրճուին զըւարթ ծափ ըզծափի, զաղէտս համակ մոռանան .

Սապէս և մեք սիրասնունդ չորեքտասան աշակերտք
Ընդ նովին քաղցըր լըծով և ընդ նովին թեթև բեռամբ
Ի հընդից ամաց հետէ սաղապանս նըշքեհեալք
Տարադիր 'ի հայրենեաց, 'ի սիրելեաց տարանջառք
Տարուբերեալ յախարհածովն գիտութեանց համատարած,
Միյտ անդու թիափարեալ, չեղեալ երբեք դասալիք
Մինչ ուրեմն զընթացս մեր աւարտավարժ հանեալ յամբով
Հասար անվընաս 'ի տենչալին նաւահանգիստ:
Այլ ընդէր կորակոր, եղբարք, զերկիր նըշմարէք,
Զի է՛ զի թախծութիւն 'ի դէմքս ձեր բերէք սուրբ .
Գիտեմ, գիտեմ զիրաւացի առիթ ձերոյ տըխրութեան .
Ըզգամ ըզնոյն ապաքէն և ես ընդ ձեզ տըրտմակից,
Զի թողումք աստանօր թողումք ըզմեր անձկալիս,
Ըզհարբս պատուական, ըզբարեկրօն բարերարս,
Թողումք ըզվարդապետս և որք ընդ մեզ կենակից,
Ըզվարժարանս համբաւատենչ, ըզբուրաստանս երախտեաց,

Բզարբրավայր սըրտից հոգւոց և զանդաստանըս մըտաց,
Ուր հընգեակ զուարթածաղիկ տիոցս արփիլք սահեցան,
Եւ զհայկական միակ նըշխար ըզմայրավանս Մըխիթարայ,
Ըզբաղաքս համօրէն, իւրովքն հանդերձ պալատամբք,
Հրաշակերտ տաճարք և բարձրաբերձ աշտարակօք :

Բայց թէ գամ մի խորհիցիմք ուստի մեկնիմք, յի երթամք,
Տըրտմութիւն մեր 'ի խինդ փոխարկեսցի նոյնհետայն.
Ինձ լաւ վոսփոր վըսեմական քան ըզվրնէժ վեհապանձ,
Լաւ թագուհին Արևելեայց քան ըզԳըշխոյն 'ի Հանդրին.
Երկչուրթն և երկթ երթի ոսկեղջերիկ տեսիլ ափանցն
Անցանէ զանցանէ զգեղեցկութեամբ ծովածոցիդ.
Չըքնաղագոյն քան ըզՀանդրին անդանօր ծովք կըրկնավըտակ,
Երկինք միշտ ծիծաղախիտ, զեղածիծաղ և երկիր,
Բոյսք բոյլ 'ի բոյլ փըթթին ծաղկունք բազմաբիւր,
Օղբ և Նուր քաղցր և վըճիտ և գեղ բնութեան գերազանց.
Թէ աստանօր վայելչագոյն թըւի մարդկան ձեռակերտ,
Անդէն ձեռն արարչազօրծ եղև միակ ճարտարապետ...
Եւ այլուտ յոյժ հրաշալի սիրելագոյն է ինձ միշտ
Շահաստանըն չնաշխարհիկ բընագաւառն իմ Բիւզանդիոն.
Հայրենիք, չըքնաղ անուն և սըրտատենչ որոց ըզգանն,
Ըզքեզ զըրուատեմ, ըզգամ, սիրեմ և սըխրանամ.
Ընդ երկար եղև ինձ տարաշխարհիկ նըշգեհոթիւն,
Այլ ոչ իսպառ ըզսիրտ իմ 'ի քէն 'ի բաց քեցեցի,
Դառնամ ահա, դառնամ ես, դարձցի առ քեզ և սիրտ իմ
Սիրա՝ որ միշտ առ քեզ անձուկ սիրով կըզկաթ էր :
Ո՛հ, որբանի քաղցր յիշատակք ծնանին այսօր 'ի միտս իմ,
Զարթնուն յիս սէր և գորով որդիական խանդաղատանք,
Աղչմունք վերակենցաղք, և յաճախեն ինձ ըզսէր.
Խանդ եռանդուն վառէ զիս, միտք վերանան 'ի բարձունս :
Շատ է. մնասիլք բարեաւ աստուածարեալ Տէր հոգելից
Որ գահերէց բազմիս 'ի զլուկ վըսեմափայլ աղըմբիս.
Դու զառաջին մեր քայլափոխըս ուղղեցեր հայրաբար
Ի զընացս առաքինի քաղաքակիրթ մարզանաց
Ի մէնջ հոլանեւ զանգիտութեան խորիս և զմորթ.
Ողջոյն և քեզ, Հայր գերյարդոյ, տեսուչ մեծի վարժարանիս,
Որ աթոռոյ և բարձին դորա անցեալ պայազատ
Զոր սկսան՝ ըզնոյն յամբուկ վըճարեցեր զըլխովին.
Ողջոյն ընդ ձեզ, հարք պատուելիք, ո՛վ դուք, կըցորդք արգեանց նոցին,
Եւ վարդապետք մեր սիրելիք. բարեաւ մնասիլք, ո՛վ ընկերք :
Եւ դուք բարեաւ, որք միանգամ 'ի դահլըճիս կոյք ժողով.
Մեք ցընծութեամբ վերադառնամք պարգեալ ըզթեա 'ի հայրենիս,
Եւ թէ չիթք արտասուաց յաւաց մերոց կայլակեն,
Խընդութեան են արտասուք, առհաւատչեայ սերտ սիրոյ :

Մ. ՏՈՒՆՅԱՆ

Ա. Մուր. Ռաֆ. Վարժարանի .